

Արձանագրություն N 02

<< ՀՀ ՄՁՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-01/24 >> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
 15 դեկտեմբերի, 2023թ, ժ 12:30,
 <<Ձյունիկ-մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ

ք. Գյումրի

Հանձնաժողովի նախագահի՝

Հանձնաժողովի անդամներ՝

Նարինե Մանուկյան

Սիրանուշ Շախմուրադյան

Գայանե Տոնոյան

Ռուզան Առաքելյան

1. <<ՀՀ ՄՁՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-01/24 >> ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 08.12.2023թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

1.2 <<Ձյունիկ-մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման համար <<ՀՀ ՄՁՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-01/24 >> ծածկագրով գնանշման հարցման միջոցով համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի		
N	Անվանումը	Հասցեն
1.	Գրիգորյան Ս ՍՊԸ	Այգեստան 9փ, տուն 25/1
2.	Ա/Ձ Սամվել Մխիթարյան	ՀՀ, ք. Գյումրի, Շարա Տալյան տ 13բ
3.	Ա/Ձ Լևոն Ալավերդյան	ՀՀ, Լոռու մարզ, գ. Նեղից, Թբիլիսյան խճ 14/35
4.	Ա/Ձ Թամարա Առաքելյան	ՀՀ, ք. Գյումրի, Տիգրան Մեծ պողոտա 2/13
5.	Ա/Ձ Կառլեն Սիմոնյան	ՀՀ, ք. Գյումրի, Գորկու 56
6.	Ա/Ձ Արտաշես Հովհաննիսյան	ՀՀ, ք. Գյումրի, 213/128
7.	ԱՐՄ ԷԴ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր 2թղմ
8.	Ա/Ձ Ռուզաննա Սարգսյան	ՀՀ, ք. Գյումրի փ. Շահումյան 188ա, բն. 11, 12

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին Գրիգորյան Ս ՍՊԸ-ի իրական շահառու հանդիսացող Խաչիկ Գրիգորյանը հանդիսանում է նաև ՀՀ գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառված ԱրտակՇին ՍՊԸ-ի իրական շահառու: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման N 1 հավելվածի 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 120-րդ և 121-րդ կետերի՝

Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ 1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ա/Ձ Լևոն Ալավերդյանի հայտում առկա էր մեկ բնօրինակ, ինչն համարվում է թերի հայտ, գնային առաջարկում անվանումները սխալ են գրված:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի անդամներ՝

Նարինե Մանուկյան _____

Սիրանուշ Շախմուրադյան _____

Գայանե Տոնոյան _____

Ռուզան Առաքելյան _____

Էլմիրա Աբրահամյան _____

Քարտուղար՝